

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԹՎԱԿԱՆԻ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՃՇԿՐՏՈՒՄ

Ա. Գ. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Աշոտ Ա Բագրատունու թագավոր հռչակվելու, հետևաբար հայոց պետականության վերականգնման տարեթիվը հայագետները դնում են 885—887 թվականների միջև: Հայոց պատմության այս կարևորագույն իրադարձության հարցում որպես մատենագիտական սկզբնաղբյուրներ ընդունում են ինչպես ժամանակով մոտ, այնպես էլ հեռու հայ և օտար պատմիչների վկայությունները, որոնց մեծ մասում թվական աննշան տարբերություններով ուրվագրվում է Աշոտ Բագրատունու ռազմաքաղաքական գործունեության ամբողջական ժամանակագրությունը. 855/56—861/62 թթ.¹ հայոց սպարապետ, 861/62—885/87 թթ.² Արմինիայի (Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի) իշխանաց իշխան, 885/87—890/91 թթ.³ հայոց թագավոր:

Սակայն այս խնդրում, բացառությամբ մի շարք պատմագիտական հետազոտությունների, գրեթե անտեսվում կամ թերագնահատվում են հայկական վիճակի արձանագրությունների հայտնի հիշատակությունները: Սեանի 874 թ. վիճագրում⁴ Աշոտ Ա Բագրատունին արդեն հիշատակվում է իբրև թագավոր, իսկ Գառնիի 879 թ. արձանագրության մեջ² նրա կին Կատրանիդեն՝ հայոց թագուհի:

Վիճակի այս տեղեկությունները Բ. Առաքելյանին հիմք են տվել նկատելու, որ Աշոտ իշխանաց իշխանը հայ նախարարների կողմից թագավոր է ճանաչվել նախքան 886 թվականը, ենթադրելով, որ այն կատարվել է 869 թ. Կոստանդնուպոլսի հունաց Փոտո պատրիարքի նամակը քննարկելու և պատասխանելու առիթով հատուկ հրավիրված Շիրակավանի եկեղեցական ժողովում, ըստ այդմ էլ եզրակացնելու, որ 886 թ. հարևան տերությունների կողմից հայոց թագավորության ճանաչումն է տեղի ունեցել⁵:

Վ. Հակոբյանը, համաձայնելով Աշոտ Ա Բագրատունու՝ երկրի ներսում ավելի վաղ թագավոր ճանաչված լինելու տեսակետին, մերժում է դրա կապը Շիրակավանի ժողովի հետ, հիմնավորելով, որ վերջինս տեղի է ունեցել 852 թ.⁴ և քննարկել զուտ դավանաբանական հարցեր: Գիտնականը թեև թերահավատությամբ է մտնում վերը նշված վիճագրերի հավաստիությանը, այդուհանդերձ ընդունում է Աշոտի ավելի վաղ՝ 864 թ. թագավոր հռչակվելու

¹ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հայկական գրերի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 68:

² Տե՛ս Բ. Н. Аракелян, Гарни. том. I, Ереван, 1951, էջ 84:

³ Տե՛ս Առլյն տեղը, էջ 85—87:

⁴ Վարդան Արևելյան, որը ժամանակով մոտ պատմիչ չէ, Շիրակավանի ժողովը թվագրում է 818=869: Տե՛ս Վարդան Բարձրբերդցի, Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 112:

փաստը, հենվելով 997 թ. կազմված հայոց կաթողիկոսների մի ցանկի վրա⁵, որի թվականը, ինչպես տեսնում ենք, ժամանակով հեռու է, ուստի արժանահավատությունը՝ կասկածելի:

Հայոց մեծամեծների կողմից Աշոտ իշխանաց իշխանին թափվոր ճանաչելու փաստը սոսկ ազգային ինքնանպատակ ցանկություն չէր, այլ ուներ ներքին և արտաքին հանգամանքներով պայմանավորված քաղաքական ու տնտեսական իրական պատճառներ: Չնայած 851—852 թթ. հակաարաբական պայտամարտության ձախողմանը, Բուղայի պատժիչ արշավանքի արհամարհներին, հայ գլխավոր իշխանների Արաբիա աքսորվելուն, այնուամենայնիվ 860-ական թթ. Հայաստանի ներքաղաքական կյանքում ստեղծվել էր մի այնպիսի բարենպաստ կացություն, երբ Մերձավոր Արևելքի երկրների ընդհանուր տնտեսա-առևտրական վերելքի ազդեցությամբ համաշխարհային առևտրափոխանակման ճանապարհներին գտնվող Հայաստանի առավել հզորացած շրջանների՝ Վասպուրականի ու Սյունիքի նահանգատերերի եռանդագին նախաձեռնությամբ և հայ եղկեցու բարձրաստիճան հոգևորականության գործունե աջակցությամբ ինքնին ձգտում էին համախմբվել ուժեղ կենտրոնի՝ Շիրակ—Այրարատի շուրջը, որտեղ հանձին իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու տեսնում էին այն գլխավոր ուժը, որն ընդունակ էր առաջնորդելու հայկական պետականության վերականգնման համար մղվող պայքարը: Դրա հաջողության համար ստեղծվել էին միջազգային բարենպաստ պայմաններ. արաբական երբեմնի լայնածավալ խալիֆայությունը կայսրությունների կործանման պատմական օրինաչափության համաձայն հոգեվարքի մեջ էր, նրա մոտավոր վախճանը քաղաքական հորիզոնում առկա էր. Պարսկաստանից մինչև Եգիպտոս ու Մադրբ բռնկված էր հակաարաբական շարժումներով, աշխարհակալության ներսում տարբեր ռազմաքաղաքական խմբավորումների միջև ծայր էր առել զահակալական սուր պայքար. կարճատև ժամանակաընթացքում, երբեմն ֆիզիկական հաշվեհարդարի ճանապարհով, միմյանց հաջորդում են հինգ խալիֆներ՝ Ալ-Մութաուաթիլ (մահ. 861), Ալ-Մունթասիր (861—862), Ալ-Մուսթային (862—866), 866—869՝ անիշխանություն, Ալ-Մուհթադի (869—870) և Ալ-Մութթամիդ (870—892):

Ահա իրերի այս հարմար ընթացքն էր, երբ, ինչպես Ս. Պողոսյանն է նշում, «Հայաստանում հարց են բարձրացնում Աշոտ իշխանաց իշխանին թափվոր հռչակելու մասին, որի վերաբերյալ եղած մատենագրական վկայությունները ենթադրել են տալիս, որ երկրի քաղաքական կյանքում դեր խաղացող մարդկանց խորհրդակցություն է տեղի ունեցել, բայց ե՞րբ և որտե՞ղ, այդ ճշտելու համար առայժմ տվյալներ չկան: Թե՛ ժամանակակից և թե՛ հետագա մատենագիրները միաբերան նշում են այն միակամությունը, որ հանդես են բերել իշխաններն ու մյուս տիրող տարրերը այդ հարցում»⁶:

Թ. Հակոբյանը վստահեցնում է, թե 875 թվականին Զաքարիա Զագեցի կաթողիկոսի հրավիրած զավառատեր ու նահանգատեր իշխանների հատուկ համաժողովը որոշում է հռչակել երկրի անկախությունը և դիմել Խալիֆին՝ Աշոտ Բագրատունուն ճանաչելու Հայաստանի թագավոր⁷:

Մեզ հայտնի մատենագրական աղբյուրներում, ինչպես վերը նշվեց, նրման ուղղակի հիշատակություն չկա: Այստեղ, նախ՝ ճիշտ չէ համաժողով կոչ-

⁵ Տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Բ. 2, Երևան, 1956, էջ 160—162:

⁶ Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1956, էջ 55—56:

⁷ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», խմբագրությամբ Ս. Գ. Ներսիսյանի, Երևան, 1972, էջ 207:

վածի տարիթիվը և վիճելի հարց է, թե ով է այն հրավիրել, վերոհիշյալ Զաբարիա հայրապետը, նրան հաջորդած Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսը, թե՞ Վասպուրականի ու Սյունիքի գահերեցներ Դերենյիկ Արծրունին, Վասակ Իշխանիկը⁸: Մինչ այդ էլ Աշոտը երկրում արդեն հռչակվել էր թագավոր և, մեր կարծիքով, այդ իրողության անմիջական արտացոլումն է Սևանի 874 թ. շինարարական-նվիրատվական արձանագրությունը:

Ս. Կարապետ եկեղեցու թմբուկի արևելահայաց կողմում տեղ խնայելու միտումով խիստ փակագրված այս վիմագիրը տեղեկացնում է, որ Սյունյաց Մարիամ իշխանուհին եկեղեցիներ է կառուցել սուրբ Առաքյալների անունով, ապա միաբանելով Աշոտ թագավորին՝⁹ կատարել նվիրատվություններ, սահմանել սուրբ ուխտի ժառանգությունը՝ ընծայելով մի շարք գյուղեր, այգիներ՝ Գառնիում ու Երևանում:

Արձանագրությունում մեզ հետաքրքրող թագավոր հիշատակող յոթն հարցը կարևորվում է, երբ փորձ է արվում այն դիտարկել վիմագրի ժամանակի ու Հայաստանի ներքաղաքական կյանքում կատարված մի նշանակալի իրադարձության շղթայական կապի մեջ:

Թովմա Արծրունու «Պատմութիւնից» տեղեկանում ենք, որ Արմինիայի մի շարք ամիրայություններ միմյանց հետ գաղտնի համաձայնության էին հկել՝ Աշոտ իշխանաց իշխանի դեմ դավադրություն կազմակերպելու և իրենց տիրապետությունը Հայաստանում հաստատելու շուրջ: Հայ իշխաններին հաջողվում է բացահայտել այդ դավադրությունը և երկրի սահմաններից դուրս վտարել Արմինիայի Արաբ ոստիկան Ահմեդ իրն իսլիմին¹⁰: Այդպիսի վերաբերմունք խալիֆի բարձրաստիճան ներկայացուցչի, կառավարիչ-վերականգնողի նկատմամբ, ինչպես Լեոն է նկատում. «առանց պատիժ կրելու վախի, կարող էր ցույց տալ միայն Աշոտը, քանի որ նրա անկեղծ հավատարմությունը դիպի արաբական գահը, կասկածի առարկա դառնալ չէր կարող: Եվ իրավ, արաբական արքունիքը պատասխանատու չհամարեց Աշոտին այս գործի համար, որ մի ուրիշի նկատմամբ գուցե պետական ամենացածր հանցանք համարվեր»¹¹:

Ի դեպ, Աշոտ Ա-ի, իբրև խոշոր դիվանագետի մասին, ամենայն դրվատանքով են խոսում նաև արաբ հեղինակները, առանձնահատուկ ընդգծելով, որ «Աշոտ պատրիկը խալիֆի մերձավոր մարդկանցից ամենամտերիմն էր, որի առջև մշտապես բաց էին արևելաշուք Սամարայի պալատական դարպասները»¹²:

Այս դեպքի բարեհաջող վերջաբանին հավանաբար զուգահեռակ է Սևանա կղզու երկու եկեղեցիների շինարարության ավարտը: 9-րդ դարի ճարտարապետական այս կառույցների իրականացումը, մշակութային արժեքից զատ, օժտված էր նաև քաղաքական համարձակող յոթն երանգով: Հայտնի է, որ արաբներն իրենց տիրապետության սկզբնական շրջանում խալիֆայության կազմի մեջ մտնող քրիստոնյա ժողովուրդներին արգելում էին նոր եկեղեցի-

⁸ Պատմիչներից միայն Ստեփանոս Օրբելյանն է նշում կոստյակ գլխավոր իշխանների անունները: Տե՛ս նրա «Պատմութիւն Գահագոհն Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 175:

⁹ Ստեփանոս Օրբելյանը (էջ 174), նաև Լ. Մելիքսեթ-Բեկը (Տե՛ս Новоткрытая надпись на Севане от 874 г. М. Л., 1939, էջ 400—415). ԹՊ-ն անտեսում են և վերծանում իշխանաց իշխան, որը սխալ ըմբերքման արդյունք է:

¹⁰ Տե՛ս Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 352—354, 357—359:

¹¹ Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 502:

¹² Թարգմանությունը մերն է, տե՛ս Ադիբ Աս-Սելիդ, Հայաստանն արաբ պատմության մեջ (արաբերեն), Հալեպ, 1972, էջ 146:

ներ կառուցել՝ թույլատրելով միայն մասնակի վերանորոգումների անցկացումը հենքում: Այն հատկապես խստորեն է կիրարկվել Մերձավոր Արևելքի կենտրոնական մասերում, իսկ Հայաստանում որոշ դեպքերում բարեբախտաբար շրջանցվել է: Օրինակ, Զվարթնոցի կառուցումը՝ ուշադրության արժանի տեղություններ՝ 641—661 թթ.: Ժամանակի ընթացքում մոտացություն մատնված այս օրհնքը Բուղայի արշավանքից հետո նորից հիշվել էր: Աշոտ իշխանաց իշխանը Սևանի հոգևոր ուխտի վանահայր Մաշտոցի (հետագայի Մաշտոց Ա Ծղիվարդեցի կաթողիկոս 897—898 թթ.— Ա. Մ.), ինչպես Ստեփանոս Օրբելյանն է վկայում¹³, պետք է ե՛ջադրել՝ իր դուստր Մարիամ իշխանուհու ջանքերով կերտված նորակառույց եկեղեցիների նավակատիքի առիթով, այցելություն է կատարում Սևանա կղզի: Ամենայն հավանականությամբ, ինչպես նման դեպքերում ընդունված է, նրան ուղեկցում էին երկրի ազդեցիկ հոգևոր ու աշխարհիկ իշխանավորները և չի բացառվում, որ հենց Սևանում ձևավորված լինի նրան թագավոր ճանաչելու գաղափարը, որը երկու անգամ թագ համառոտագրված ձևով իր անուղղակի արտացոլումն է գտել 874 թ. վիճազրում:

Հայոց թագավորության հաստատման ճանապարհին վճռական գործոն էր Հայաստանի ճիշտ կողմնորոշվելու պարագան այն անհաշտ հակամարտության մեջ, որն ազդեցություն ունեցրել էր վերանայման համար մղվում էր փրկուզվող խալիֆայության ու վերածաղկող Բյուզանդիայի միջև, ինչպես նաև մաներելու ընդունակությունը՝ Հայաստանին այդ պայքարում իբրև դաշնակից տեսնելու երկու հարևան կայսրությունների ձգտումների մեջ: Առաջինը օանում էր իր ազդեցությունը պահպանել Հայաստանում, որի ընդունումը ենթադրում էր, որ Արաբիայի մոտալուտ փլատակներից երևալու էր երկրի քաղաքական անկախությունը, իսկ երկրորդի ձգտումը նշանակում էր կայացած ինքնուրույնության կորուստ ու պետականության շիրագործում: Ստեղծված իրավիճակն Աշոտ Ա Բագրատունուց պահանջում էր շրջահայաց քաղաքականություն ու նրբանկատ դիվանագիտություն:

Վարդան Արևելցին հայտնում է, որ Բյուզանդիայի ծագումով հայ կայսր Վասիլ Ա-ն, իմանալով, որ հայոց Արշակունի թագավորները թագադրվում էին Բագրատունի իշխանների ձեռքով, 876 թ. Հայաստան է ուղարկում նիկիտ անունով ներքինուն, խնդրելով, որպեսզի Աշոտը, իբրև Բագրատունի, թագ ուղարկի իրեն¹⁴: Այս եղելության մեջ, անշուշտ, նախնիների կապի վերահաստատման ուղղությամբ կայսրի ազգային զգացմունքներով տոգորվածությունը չէր, այլ Բյուզանդիայի ցանկությունը՝ դաշնակցելու Հայաստանի հետ:

Ակներև է, որ Աշոտն արդեն ճանաչվում էր որպես թագավոր, այլապես կայսրը նրանից թագ չէր խնդրի: Այս հարցը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ Վասիլը գահ է բարձրացել 867 թ. և միայն ինը տարի անց, 876-ին է թագ խնդրում Աշոտից, դրանով իսկ, կամա թե ակամա, նախադեպ ստեղծելով հայոց թագավորության պաշտոնական ճանաչման համար: Սրան հետևում է Զաքարիա կաթողիկոսի տեսակցության գնալը (հավանաբար ուղարկվելը) Ատրպատականի ամիրա Իսա իրն Շեխի մոտ¹⁵, ըստ երևույթին տեղյակ պահելու, բանակցելու և առաջիկա գործողությունների հովանավորությունն ստանալու ակնկալիքով:

Զաքարիա հայրապետի վախճանվելուց հետո 876 թ. հովվապետ է օժտվում Գևորգ Բ Գառնեցին, որի աթոռակալության ժամանակ Աշոտին էին են-

¹³ Ստեփանոս Օրբելյան, Նույն տեղում:

¹⁴ Վարդան, էջ 116:

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

թարկվում ոչ միայն Վիրքն ու Աղվանքը, այլև՝ կովկասցիները և, ինչպես Վարդան պատմիչն է մեկնում. «... չէր ինչ պակաս բայց ի թագէ, զոր խորհէին իշխանքն Հայոց. և ի ձեռն Յիսէի ազդ առնեն ամիրապետին»¹⁶:

Նույն առիթով Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ հայ իշխաններն ու նախարարները «խորհուրդ միաբանական առեալ՝ թագաւորեցույանել զնա ի վերայ ինքնեանցն, զեկուցանեն ամիրապետին ի ձեռն ոստիկանին Յիսէի՝ որդւոյն Շեխայ»¹⁷:

Այս խորհրդակցութիւնը հավանաբար տեղի է ունեցել 876/77 թվականին: Պատահական չէ Կատրանիւբի հայոց թագուհի հիշատակութիւնը Գառնիի 879 թ. խաչքարի վիմագիր վկայութիւնում, որտեղ «Յ» հարյուրավոր թվականը շափսերով անհամեմատ փոքր է իրեն հաջորդող, նույն զուգահեռութեամբ դասավորված «Ի» և «Ը» տառերից, ընդ որում «Ի» տասնավոր բաղադրիչի մեծ ուղղահայաց մասնիկի վերնամասում խաչաձև հատվում է պատվի նշան— հորիզոնական գիծը, և այդ ՅԻԸ թվականը, առանց արձանագրութեանը ծանոթանալու, ՅԻԸ (899) ենթադրելը, հետևաբար Սմբատ Ա-ի ժամանակները տեղափոխելը, ճիշտ չէ¹⁸:

Մոտ տասը տարի ձգձգելուց հետո, որը բացատրվում է արաբական կայսրութիւնում վիճակի կարճատև կայունացմամբ, նպատակ ունենալով տարածաշրջանում, հանձին Հայաստանի, տեսնել այն գործոնը, որն արաբական տիրապետութեան ամբողջականութեան պահպանութեան համար ակամա կրփոխհակադրվեր մյուս արաբահայատակ երկրների ինքնիշխանութեան գործընթացներին, ինչի արհավիրքների ականատեսն ենք դառնում առաջին Բագրատունի թագավորի հաջորդների՝ Սմբատ Ա-ի (890—914) և Աշոտ Բ-ի (914—928) զահակալութեան տարիներին անկախութեան համար մղվող պայքարում, Ահմադ Աբու-Աբբաս Ալ-Մութթամիդ ալ-Ալլահ բեն Ալ-Մութթաուքիլ խալիֆը (870—892) ի վերջո ճանաչում է Աշոտի թագավորութիւնը՝ 886 թ.¹⁹, նրան թագ, թագավորական զգեստներ ու արաբական նժույգ ուղարկելով, և Գևորգ Գառնեցի հայրապետի օրհնութեամբ, «փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակեն զնա (Աշոտին— Ա. Մ.) թագաւոր ի վերայ Ազքանազեան ազին»²⁰: Հավանական ականատես պատմիչի տարակուսանքն օծման արարողութեան: բացակայութեան առիթով հաստատում է Աշոտի ավելի վաղ թագավոր ճանաչված լինելու վարկածը՝ զուցե օծութեան ծիսակարգով ոչ հրապարակավ կատարված: Դրան հաջորդում է եգերացիների թագավորի ողջույնի այցը հայոց արքային²¹, ապա Բյուզանդիայի Վասիլ Ա կայսրի ուղարկած թագի ու թանկարժեք ընծաների հասնելը Հայաստան, ինչպես Վարդանի շարադրանքն է հուշում՝ 887 թվականին²²:

Այսպիսով, վերն ասվածից հետևում է, որ Աշոտ Ա Բագրատունին Հայաստանում թագավոր է ճանաչվել, և հետևաբար հայոց պետականութեան վերականգնումը կատարվել է 870-ականների սկզբներին, մասնավորապես 874 թվականին, իսկ ավանդականորեն ընդունված 886/87 թթ. պետք է համարել հայկական պետութեան միջազգային ճանաչման տարեթիվը:

¹⁶ Նույն տեղում, էջ 117:

¹⁷ Հովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 138—139:

¹⁸ Տե՛ս Վ. Հակոբյան, Ըզվ. աշխ., էջ 161, տողատակ:

¹⁹ Ժամանակով մոտ պատմիչներից Հովհաննէս Դրասխանակերտցին այդ կարևորագույն իրադարձությունը չի թվագրում (էջ 139), իսկ Թովմա Արծրունու «Պատմությունից» (էջ 370) հառնում է 886 թվականը:

²⁰ Հովհաննէս Դրասխանակերտցի, Ըզվ. աշխ.:

²¹ Նույն տեղում, էջ 140:

²² Վարդան, էջ 117:

Նմանօրինակ իրողությունների վկաներն ենք մենք այսօր, երբ կան դե ֆակտո անկախ երկրներ՝ ի դեմս ԼՂՀ-ի, Աբխազիայի և այլն, բայց դե յուրե ճանաչումն ուշանում է: Հնում, ինչպես Ռ. Մաթևոսյանն է պարզաբանում, թագավորի իրավական ճանաչումը կատարվում էր թագ ստանալու եղանակով²³:

Պատմաբանը հերքում է Կ. Յուզբաշյանի այն կասկածը, թե հայերը բյուզանդական Վասիլ կայսրից թագ չեն ստացել, որը հիմնավորված է այդ մասին ժամանակով մոտ պատմիչների լուսթյամբ (պետք է ենթադրել նաև կայսրերից Բագրատունի հայոց թագավորների իշխանաց իշխան հորջորջմամբ) և Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու ու շրջանի ենթադրություններով, որոնք առաջացել են արաբական թագերի հիշողությունների ազդեցությամբ²⁴:

Հատկանշական է, որ Բյուզանդիայից թագ ստանալու իրողությունը հանդիպում ենք նաև արաբական աղբյուրներում, որոնք հաղորդում են, որ «Խալիֆն ընդառաջելով հայ ժողովրդի ցանկության ու կամենալով թագավոր Հաստատանի կոչմանը համապատասխան ամենաընտիր նվերն ընծայել իր ուժեղ դաշնակից Աշոտին՝ հիշրայի 272 թ. (885/86 թ.— Ա. Մ.) նրան է ուղարկում թագ ու ծիրանի: Գրոնական մեծ հանդիսությունը Աշոտն իր գլխին է դնում թագը՝ բազմելով նախնյաց գահին:

Վասիլ Արշակունի կայսրը, ձգտելով Աշոտ թագավորի հետ բարեկամություն, նրան ուղարկում է նման ընծաներ»²⁵:

Միջնադարյան արաբական աղբյուրներից սիրիացի ժամանակակից հետազոտողի քաղած այս հիշատակության մեջ ակնբեր է այն իրողությունը, որ Աշոտին խալիֆը վերաբերվում էր ոչ թե իբրև վասալի, այլ որպես ուժեղ դաշնակցի, և որ հատկանշական է, Աշոտին թագավոր ճանաչելու խնդրանքով խալիֆին նախարարները դիմել են հայ ժողովրդի անունից: Ուշագրավ է նաև տեղեկությունը թագադրության ժամանակ տեղի ունեցած եկեղեցական մեծ հանդիսության մասին, որի վերաբերյալ մեզ հայտնի ժամանակամեծ աղբյուրները միայն թագի օրհնությունն են հիշատակում, իսկ ուշ շրջանի պատմիչները, ենթադրաբար նաև՝ օծությունը²⁶, որն ինչպես վերևում ենք կռահել, հավանաբար ավելի վաղ է կատարվել, սկզբնավորելով ավելի քան շորսուկես դարի պետականազրկումից հետո «երրորդ նորոգումն թագաւորութեանս Հայոց ի ձեռն Աշոտոյ Բագրատունւոց»²⁷:

А. Г. МАНУЧАВЯН.—Эпиграфическое уточнение даты царствования Багратидов в Армении.— На основании Севанской (874 г.) и Гарнийской (879 г.) лапидарных надписей еще акад. Б. Н. Аракелян заметил, что Ашот I Багратуни был признан царем Армении в более раннее время. По мнению автора статьи, датой воцарения Ашота I можно считать 874 г., отраженный в Севанской надписи, а традиционно принятые 885—887 гг. являются периодом международного признания армянской государственности. Аналогичные явления мы встречаем и в настоящее время, когда фактически существуют независимые государства (НКР, Абхазия и т. д.), но юридического признания они еще не получили.

²³ Տե՛ս Ռ. Ի. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 88:

²⁴ Նույն տեղում, էջ 97—98:

²⁵ Թարգմանությունը մերն է, տե՛ս Ադիր Սա-Սեյիդ, Աշխ. աշխ., նույն տեղում:

²⁶ Ստեփանոս Օրբելեան, էջ 175:

²⁷ Ստեփանոս Տարոնեցի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պ.-ը., 1885, էջ 157: